Միևնոյն պատմագրին նայելով, տարի մը հաքը, 1187-ին, Դպաբնեբուն և Հայերուն միջև եկեղեցիի անվանումնաթեան վէճ կ'յուզուի, և երկու եկեղեցիներ կ'վերադարձուին Հայոց։

Այս ամէնէն կ'հասկցուի թէ Ժամերգութեանները անկումէն առաջ վերջը, էջմիածնի տիրապետութեան սկիզբը, այսինքն հայ վզրութեան ազդեցութեան վերջացման վրայ էին, Հայերը կ'կրնան նախորդ փայլուն օրերուն հախտահատուածը, կորսնցնելով իրենց արբանեակութեան մեծ մասը։

Մէմլուքներու տիրապետութեան շրջանին (1260—1517), երբ քանիցս պատերազմներ պատահեցան Եգիպտոսի և Հայաստիլիկիոյ միջև, Եգիպտոսի մէջ Հայոց բախտը անշուշտ պիտի չ'կրնար փայլուն ըլլալ, և սակայն, խոհեմութեան և հեռատես ազգայիններու չնորհիւ, որոնք կ'հասկնային աշխարհի մարզոց քաղաքագիտութիւն կոչած խնամատութենէն, Գաղութը կրցաւ պահել իր գոյութիւնը, և նոյնիսկ համբաւը։

Կ'աւանդուի թէ այդ պատերազմներու միջոցին Եգիպտոս գերեզած Հայեր ընդհանրապէս կ'բնակցուէին այժմեան Մարմինայի շրջակայքը, Գոմ էլ Ազմեճ (Հայոց Բլուր) կոչուած թաղին մէջ, ու կ'կարծուի նոյնիսկ թէ այդ վայրին հայ գիւղմանուանութիւնը մնր Ս. Մինաս եկեղեցիին անդը հնադարեան ուրիշ համանուն հայ եկեղեցիի մը գոյութիւնը կ'վերանայ մինչեւ այս թուականը։

Թէ Մէմլուքեան շրջանի այդ օրերուն իրօք բաւական ազգային և եկեղեցական կեանք կար տակաւին Գահիրէի Հայ Գաղութին մէջ, կ'հաստատուի անով որ, 1375-ին, երբ Ներսիսեանց վերջին թագաւորը, Լեւոն Ե. և կաթողիկոսը, Գրիգոր Ա. գերի կ'բերուին Գահիրէ, բաց Գաբրիէլի, որ կալտնաւոր արքային լաւին խոստովանահայրն էր և քարտուղարը, տեղւոյն Հայոց մէջ կ'գտնուէին ազգային երեւելիներ, որոնց երաչխաւորութեամբ Լեւոնի թոյլ կ'տրուի ազատ ապրիլ Եգիպտոսի մայրաքաղաքին մէջ, և յետոյ, Գաղաւորին և կաթողիկոսին թերուղեմ կառավարական խնամատարութիւնը կ'իրականանայ գաղութին մէջ, երբ կաթողիկոսը կ'պատասխանէ որ ինչպէս Կիլիկիոյ նոյնպէս Գահիրէի եկեղեցիներուն մէջ ժամերգութեան միջոցին այլեւս չ'կիշուի Լեւոն իբրեւ